Արձանագրություն 4

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.04.2025թ. ժամը 14:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ասրյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության պետ,

Հանձնաժողովի անդամներ

Դ. Պետրոսյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ,

Մ. Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթերի հսկողության և արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ,

Մ. Այլանջյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ

Ն. Գևորգյան - ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ:

1. **<u>Տեղեկություններ հիմնավորումների վերաբերյալ</u>**

Ընթացակարգի շրջանակում հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ՝

1. «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ վերջինս հայտով չի ներկայացրել հրավերի 1-

ին մասի 2.7.1 կետով պահանջվող «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-25/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 30-ին ժամը 12:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ասրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Պետրոսյան

_____ Մ. Մինասյան

_____ Մ. Այլանջյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան